

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԻ  
ՈՐՈՇՈՒՄ

23 փետրվար 2018, № 26. 2

Ղեկավարվելով Շիրակի պետական համալսարանի կանոնադրության 48-րդ կետի 13-րդ ենթակետով, Գիտական խորհրդի կանոնակարգի 2.2.13 կետով՝

ՇՊՀ-ի գիտական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

**ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

I. ՇՊՀ գիտական խորհուրդը, հիմք ընդունելով վերջին 5-6 ամիսների ընթացքում տեղի ունեցող իրադարձությունները՝ կապված բուհի անունը անհարկի շահարկելու, բուհը վարկաբեկելու, բարոյահոգեբանական մթնոլորտը խաթարելու, դասապրոցեսները կազմալուծելու, ամբողջ բուհում և հատկապես սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետում, պատմության ամբիոնում անառողջ մթնոլորտ ստեղծելու, ՇՊՀ գիտական խորհրդին վարկաբեկելու, ուսանողներին բարեվարքության սկզբունքին հակառակ դաստիարակելու հետ, ինչի պատճառով բուհը կրել և կրում է ֆինանսական և վարկանիշային կորուստներ, որոշում է դիմել ռեկտորին՝ ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր երկշաբաթյա ժամկետում ինդրին անհապաղ լուծում տալու համար:

II. Քանի որ ՇՊՀ-ի պատմության ամբիոնի վարիչի ԺՊ Հ.Խորիկյանի և դասախոս Գ.Համբարյանի պահվածքն այլևս վստահություն չեն ներշնչում և անհամատեղելի են դասախոսի աշխատանքին, ՇՊՀ-ի գիտական խորհուրդը որոշում է ձևավորել էթիկայի հանձնաժողով՝ բաղկացած 5 անձից՝ վերոնշյալ հարցը քննարկելու.

**1. Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ

**2. Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր

**3. Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր

**4. Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ

**5. Չարչոյյան Արթուր Էդվարդի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմության» բաժնի 2-րդ կուրսի ուսանող, ՈԻԽ նախագահի տեղակալ

**III.** Հանձնաժողովը տասը աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է կայացնելու որոշում, որը կարող է հիմք հանդիսանալ ՇՊՀ -ի՝ 2017թ-ի հունվարի 30-ին հաստատված «Էթիկայի սկզբունքներ»-ով սահմանված կարգապահական տույժերի կիրառման համար:

**IV.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հիմք՝ ՇՊՀ գիտական խորհրդի 12.02.2018թ-ի N 25.1 որոշումն ու 23.02.2018թ.-ի թիվ 26 գիտական խորհրդի արձանագրությունը / կից ներկայացվում է/:

**ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**